# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆԻՍՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Լեռնանիստ, /094-55-33-04, 094-04-76-40, lernanist1@rambler.ru,

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2015թվականի N 56-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆԻՍՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի պահանջը

Համայնքի ավագանին **Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝**

Հաստատել Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 8 -ի թիվ 16 արտահերթ նիստի ՕՐԱԿԱՐԳԸ '

1.Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնքի ավագանու 2014 թվականի դեկտեմբերի 5-իN 89-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին ։

2.Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնքի ավագանու անդամ Գրիգորի Ռուբենի Բարեղամյանի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին

3.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Լեռնանիստ գյուղական համայնքում 2016 թվականի համար տեղական տուրքերի եվ վճարների միանական դրույքաչափերը սահմանելու մասին ։

4.Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնքի ղեկավարի վարձատրության չափը սահմանելու մասին:

5.Կոտայքի մարզի Լեռնանիստի գյուղապետարանի աշխատակազմի , <<Լեռնանիստի մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ի աշխատակազմի և <<Լեռնանիստ բժշկական ամբուլատորիա>> ՀՈԱԿ-ի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:

6. Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնքի 2016 թվականի բյուջեն հաստատելու մասին:

7. Լեռնանիստի գյուղապետարանի 2016 թվականի բյուջեի կատարման ընթացքում համայնքի ավագանու որոշմանը չհակասող վերաբաշխումներ կատարելու թույլտվություն տալու մասին:

8. Լեռնանիստ համայնքի ղեկավարի կամավոր լիազորությունների իրականացման կարգը սահմանելու մասին:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ՀԱՅԿԱԶ
2. ԱՎԱԳՅԱՆ ԳԵՆԱԴԻ
3. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՍԱՄՎԵԼ
4. ԲԱՐԵՂԱՄՅԱՆ ԳՐԻԳՈՐԻ
5. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱԼԲԵՐՏ
6. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՎԱԶԱԳԱՆ
7. ՄԵԼՔՈՆՅԱՆ ԻՍԱՀԱԿ
8. ՄՈՎՍԻՍՅԱՆ ՍԱՄՎԵԼ
9. ՆԱԶԱՐՅԱՆ ՄԵԽԱԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՏՅՈՄ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆԻՍՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Լեռնանիստ, /094-55-33-04, 094-04-76-40, lernanist1@rambler.ru,


## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2015թվականի N 57-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 5-Ի N 89-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի պահանջներով*

**Համայնքի ավագանին** <u>**ՈՐՈՇՈՒՄ Է՝**</u>

1. Կոտայքի մարզի Լեռնանիստ հանայնքի ավագանու 2014 թվականի դեկտեմբերի 5-ի" Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնքի 2015 թվականի բյուջեն հաստատելու մասին" N 89-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները:

1) 01.1.1.51 ծրագրի 4212 հոդվածի <<2600.0>> թիվը փոխարինել <<2400.0>> թվով:
2) 01.1.1.51 ծրագրի 4232 հոդվածի <<50.0>> թիվը փոխարինել <<30.0>> թվով:
3) 01.1.1.51 ծրագրի 4269 հոդվածի <<310.0>> թիվը փոխարինել <<110.0>> թվով
4) 01.1.1.51 ծրագրի 4261 հոդվածի <<400.0>> թիվը փոխարինել <<500.0>> թվով:
5) 01.3.3.51 ծրագրի 4234 հոդվածի <<496.0>> թիվը փոխարինել <<356.0>> թվով:
6) 02.2.1.51ծրագրի 4239հոդվածի <<40.0>> թիվը փոխարինել <<0>> թվով
7) 02.5.1.51ծրագրի 4239 հոդվածի <<40.0>> թիվը փոխարինել <<0>> թվով:
8) 03.2.1.55 ծրագրի 4239 հոդվածի <<40.0>> թիվը փոխարինել <<0>> թվով
9) 08.2.4.51ծրագրի 4239 հոդվածի <<1357.4>> թիվը փոխարինել <<1591.4>> թվով:
10) 08.2.4.51 ծրագրի 4252 հոդվածի <<80.0>> թիվը փոխարինել <<130.0>> թվով:
11) 08.4.2.55 ծրագրի 4239 հոդվածի <<50.0>> թիվը փոխարինել <<0>> թվով
12) 09.1.1.51ծրագրի 4511 հոդվածի <<12600.0>> թիվը փոխարինել <<12666.0>> թվով:
13) 10.7.1.51ծրագրի 4729 հոդվածի <<2700.0>> թիվը փոխարինել <<2980.0>> թվով:

**2. Եկամտային մաս**

Ընթացիկ ծախսերի ֆինանսավորման համար եկամուտների պլանը նախատեսել 150.0 հազար դրամ 1261 տող պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումներ /սուբվենցիաներ/:

3. Ծախսային մաս

01.1.1.51 համայնքի աշխատակազմի ապարատի պահպանում 5113 շենք և շինությունների կապիտալ վերանորոգում հոդվածի <<0>> թիվը փոխարինել <<150.0>>թվով:

4. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող 10-րդ օրը:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ՀԱՅԿԱԶ
2. ԱՎԱԳՅԱՆ ԳԵՆԱԴԻ
3. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՍԱՄՎԵԼ
4. ԲԱՐԵՂԱՄՅԱՆ ԳՐԻԳՈՐԻ
5. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱԼԲԵՐՏ
6. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՎԱՉԱԳԱՆ
7. ՄԵԼՔՈՆՅԱՆ ԻՍԱՀԱԿ
8. ՄՈՎՍԻՍՅԱՆ ՍԱՄՎԵԼ
9. ՆԱԶԱՐՅԱՆ ՄԵԽԱԿ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՏՅՈՄ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆԻՍՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Լեռնանիստ, /094-55-33-04, 094-04-76-40, lernanist1@rambler.ru,

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

08 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2015թվականի N 58-Ա

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄ ԳՐԻԳՈՐԻ ՌՈՒԲԵՆԻ ԲԱՐԵՂԱՄՅԱՆԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետի , 21-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Կոտայքի մարզիպետարանի կողմից 2015 թվականի նոյեմբերի 6-ի N 01/15.1/5270-15 գրությամբ ուղարկված մարզպետարանի կողմից Լեռնանիստ համայնքում իրականացված վարչական հսկողության արդյունքում կազմված արձանագրությունը

Համայնքի ավագանին Ո Ր Ո Շ ՈՒ Մ  է

1. Վաղաժամկետ դադարեցնել Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնքի ավագանու անդամ Գրիգորի Ռուբենի Բարեղամյանի լիազորությունները:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

Կողմ -0 Դեմ -8 Ձեռնպահ -0

1. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ՀԱՅԿԱԶ
2. ԱՎԱԳՅԱՆ ԳԵՆԱԴԻ
3. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՍԱՄՎԵԼ
4. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱԼԲԵՐՏ
5. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՎԱԶԱԳԱՆ
6. ՄԵԼՔՈՆՅԱՆ ԻՍԱՀԱԿ
7. ՄՈՎՍԻՍՅԱՆ ՍԱՄՎԵԼ
8. ՆԱԶԱՐՅԱՆ ՄԽԻԱԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՏՅՈՄ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆԻՍՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Լեռնանիստ, /094-55-33-04, 094-04-76-40, lernanist1@rambler.ru,

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

08 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2015թվականի N 59-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆԻՍՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդկետով*

***Համայնքի ավագանին*** ***<u>ՈՐՈՇՈՒՄ Է՝</u>***

1.Սահմանել Կոտայքի մարզի Լեռնանիստ գյուղական համայնքի տեղական տուրքերի և վճարների միասնական դրույքաչափը , համաձայն հավելվածի.

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդ 10-րդ օրվանից:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ՀԱՅԿԱԶ
2. ԱՎԱԳՅԱՆ ԳԵՆԱԴԻ
3. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՍԱՄՎԵԼ
4. ԲԱՐԵՂԱՄՅԱՆ ԳՐԻԳՈՐԻ
5. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱԼԲԵՐՏ
6. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՎԱԶԳԱՆ
7. ՄԵԼՔՈՆՅԱՆ ԻՍԱՀԱԿ
8. ՄՈՎՍԻՍՅԱՆ ՍԱՄՎԵԼ
9. ՆԱԶԱՐՅԱՆ ՄԵԽԱԿ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ԱՐՏՅՈՄ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ**

Հավելված
ՀՀ Կոտայքի մարզի Լեռնանիստ
համայնքի ավագանու 2015 թվականի
դեկտեմբերի 8-ի N 59-Ն որոշման

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆԻՍՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինություն-ների /ներառյալ ոչ հիմնական / շինարարության /տեղադրման / թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝

<u>Հիմնական օբյեկտների համար.</u>

1/ մինչև 300 քմ. ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի,այդ թվում ՝ այգեգործական /ամառանոցային տների / ինչպես նաև մինչև 200քմ ընդհանուր մակերես ունեցող և հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար **10.000 դրամ**

**2/ Սույն կետի 1) ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝**

**ա**. 201 քմ մինչև 500քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ **10.000 դրամ:**

**բ**. 501 քմ – մինչև 1000 քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ **15.000 դրամ:**

գ. 1001 –ից մինչև 3000քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար ՝ **15.000 դրամ**:

դ. 3001-ից և ավելի քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 15.000 դրամ

ոչ հիմնական շինությունների տեղադրման համար

ե. մինչև 20 քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ **3000 դրամ**

**զ**. 20 և ավելի քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ **5000 դրամ**

*3.* Համայնքի վարչական տարածքում շենքերի ,շինությունների,քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման արդիականացման աշխատանքների / բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի/ համար,սահմանել՝

1/ չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների / այդ թվում՝ստորգետնյա / հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն ՝3000 դրամ,

2/ բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների / այդ թվում՝ ստորգետնյա / հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ

սենքերի գործառական նշանակության փոփոխություն,ապա, բացի սույն կետի 1-ին ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին կետով սահմանված նորմերը՝օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ սենքերի գործառական նշանակության փոփոխության մասով,

3/ նախատեսվում է միայն կցակառույցների,վերնակառույցների,շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում՝ստորգետնյա/ շինարարություն կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն,ապա այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին կետով սահմանված նորմերը:

*4.* Համայնքի վարչական տարածքում շենքերի շինությունների օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանել **3000 դրամ:**

***5. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝***

1/ Ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանել՝ ***4.500 դրամ*** :

2/ Ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում ՝ յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանել՝ ***3000 դրամ:***

***6. Համանքի տարածքում՝***

1/ բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար յուրաքանչյուր օրվա համար մեկ քառակուսի մետրի համար տեղական տուրք սահմանել **350 դրամ**

2/ ՀՀ Կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սահմանամերձ և բարձր լեռնային բնակավայրերում հեղուկ վառելիքի , հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի, հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար սահմանել **50.000 դրամ:**

3/ ՀՀ Կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սահմանամերձ և բարձր լեռնային բնակավայրերում սեղմված բնական գազերի մանրածախ առևտրի կետերում սեղմված բնական գազերի վաճառքի թույլտվության համար՝ **50.000 դրամ:**

4/ Համայնքի տարածքում գտնվող խանութներում, կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել ***30.000 դրամ:***

5.Համայնքի տարածքում սեղմված բնական գազերի մանրածախ առևտրի կետերում սեղմված բնական գազերի վաճառքի թույլտվության համար սահմանել **150.000 դրամ:**

6/ ՀՀ Կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սահմանամերձ և բարձր լեռնային բնակավայրերում տեխնիկական հեղուկների խանութներում, կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել ***10.000 դրամ:***

7/ Համայնքի անվանումը ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվության համար սահմանել 50.000 դրամ

8/ համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրականացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանել՝

- Հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման համար՝ **6000 դրամ**
- Ոչ հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման համար՝ **1000 դրամ**

*7. Համայնքի տարածքում*

Թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության համար, յուրաքանչյուր տարվա համար՝ ***50.000 դրամ:***

**8.** Համայնքի տարածքում՝ առևտրի , հանրային սննդի և զվարճանքի ,շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները / սաունաները / խաղատները , ժամը 24- 00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝

1/ առևտրի օբյեկտների համար ՝ **25.000 դրամ**:

2/ հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ **50.000 դրամ**:

3/ բաղնիքների /սաունաների /համար՝ **200.000 դրամ**:

4/ խաղատների կազմակերպման համար՝ **500.000 դրամ:**

5/ շահումով խաղերի կազմակերպման համար՝ **500.000 դրամ**

6/ վիճակախաղերի կազմակերպման համար ՝ **150.000 դրամ**

9. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար 1քմ-ի տեղական տուրքը սահմանվում է՝

1/ ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ **2000 դրամ:**

2/ թունդ ալկոհոլային / սպիրտի պարունակությունը 20 և ավել ծավալային տոկոս/ արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ **3500 դրամ:**

3/ այլ արտաքին գովազդի համար՝ **1500 դրամ**:

4/ դատարկ գովազդային վահանակների համար՝ **700 դրամ:**

10. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել՝ **500 դրամ:**

11. Համայնքի տարածքում մարդատար տաքսու / բացառությամբ երթուղային տաքսիների / ծառայությունն իրականացնելու թույլտվության համար, տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է **500 դրամ:**

12. Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու ու հաստատելու , ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել՝ **5000 դրամ**:

13. Տեղական ինքնակառավարման մարմինների տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել՝**1000 դրամ**:

14. Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար՝ մասնակիցների վճար սահմանել՝ **5000 դրամ**

**15**. Համայնքի վարչական տարածքում աղբահանություն կազմակերպելու համար.

**1**) Կենցաղային աղբի համար աղբահանության վճար սահմանել ըստ հաշվառված անձանց քանակի (համայնքում անձնագրային հաշվառման կանոններով ըստ հասցեի հաշվառում ունեցող) և /կամ/ փաստացի բնակվող յուրաքանչյուր բնակչի համար ամսական **50** դրամ:

ԼԵՌՆԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆԻՍՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Լեռնանիստ, /094-55-33-04, 094-04-76-40, lernanist1@rambler.ru,

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

08 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2015թվականի N 60-Ա

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով

**Համայնքի ավագանին ՈՐՈՇՈՒՄ Է՝**

1. Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնքի ղեկավարի վարձատրության չափը սահմանել 287.000 / երկու հարյուր ութսունյոթ հազար / ՀՀ դրամ:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում 2016 թվականի հունվարի 1-ից:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ՀԱՅԿԱԶ
2. ԱՎԱԳՅԱՆ ԳԵՆԱԴԻ
3. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՍԱՄՎԵԼ
4. ԲԱՐԵՂԱՄՅԱՆ ԳՐԻԳՈՐԻ
5. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱԼԲԵՐՏ
6. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՎԱՉԱԳԱՆ
7. ՄԵԼՔՈՆՅԱՆ ԻՍԱՀԱԿ
8. ՄՈՎՍԻՍՅԱՆ ՍԱՄՎԵԼ
9. ՆԱԶԱՐՅԱՆ ՄԵԽԱԿ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ԱՐՏՅՈՄ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆԻՍՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Լեռնանիստ, /094-55-33-04, 094-04-76-40, lernanist1@rambler.ru,

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

08 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2015թվականի N 61-Ա

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆԻՍՏԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ, <<ԼԵՌՆԱՆԻՍՏԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ>> ՀՈԱԿ-Ի ԵՎ <<ԼԵՌՆԱՆԻՍՏ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՄԲՈՒԼԱՏՈՐԻԱ>> ՀՈԱԿ-Ի ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդկետով

**Համայնքի ավագնին ՈՐՈՇՈՒՄ Է՝**

1.Հաստատել Կոտայքի մարզի Լեռնանիստի գյուղապետարանի աշխատակազմի , <<Լեռնանիստի մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ի աշխատակազմի և <<Լեռնանիստ բժշկական ամբուլատորիա>> ՀՈԱԿ-ի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը, համաձայն N 1.2.3 հավելվածների:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2016 թվականի հունվարի 1-ից:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ՀԱՅԿԱԶ
2. ԱՎԱԳՅԱՆ ԳԵՆԱԴԻ
3. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՍԱՄՎԵԼ
4. ԲԱՐԵՂԱՄՅԱՆ ԳՐԻԳՈՐԻ
5. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱԼԲԵՐՏ
6. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՎԱՉԱԳԱՆ
7. ՄԵԼՔՈՆՅԱՆ ԻՍԱՀԱԿ
8. ՄՈՎՍԻՍՅԱՆ ՍԱՄՎԵԼ
9. ՆԱԶԱՐՅԱՆ ՄԵԽԱԿ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՏՅՈՄ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ**

Հավելված N 1
Լեռնանիստ գյուղական համայնքի ավագանու
2015 թվականի դեկտեմբերի 8-ի N 61-Ա որոշման

ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿ

Կոտայքի մարզի Լեռնանիստի գյուղապետարանի աշխատակազմի աշխատակիցների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը 2016 թվականի համար

Աշխատակիցների թվաքանակը՝ 17

| Հ/հ | Կազմակերպության անվանումը | Հաստիքի անվանումը | Հաստիքի տեսակը | Պաշտոնի ծածկագիրը | հաստիքային միավորը | Պաշտոնային դրույքաչափ | Հավելումը | Հավելավճարը | Աշխատա-վարձի չափը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 |
| 1 | Գյուղապետարանի աշխատակազմ | Համայնքի ղեկավար | Քաղաքական | - | 1 | 287000 | | | 287 000 |
| 2 | | Համայնքի ղեկավարի տեղակալ | Հայեցողական | – | 1 | 130000 | | | 130 000 |
| 3 | | Աշխատակազմի քարտուղար | Համայնքային ծառայության | 1.2-1 | 1 | 150000 | | | 150 000 |
| 4 | | առաջատար մասնագետ-հաշվապահ | Համայնքային ծառայության | 3, 1-1 | 1 | 130000 | | | 130 000 |
| 5 | | առաջատար մասնագետ-գանձապահ | Համայնքային ծառայության | 3, 1-2 | 1 | 130000 | | 1300 | 131 300 |
| 6 | | 1-ին կարգի մասնագետ | Համայնքային ծառայության | 3,2-1 | 1 | 79 000 | | 790 | 79 790 |
| 7 | | 1-ին կարգի մասնագետ | Համայնքային ծառայության | 3,2-2 | 1 | 79 000 | | | 79 000 |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 8 | | 2-րդ կարգի մասնագետ | Համայնքային ծառայության | 3,3-1 | 1 | 78 000 | | | 78 000 |
| 9 | | 2-րդ կարգի մասնագետ | Համայնքային ծառայության | 3,3-2 | 1 | 78 000 | | | 78 000 |
| 10 | | գործավար | Տեխնիկական սպասարկման | _ | 1 | 77 904 | | | 77 904 |
| 11 | | պահակ | Տեխնիկական սպասարկման | _ | 1 | 77 904 | | | 77 904 |
| 12 | | Հավաքարար | Տեխնիկական սպասարկման | _ | 1 | 77 904 | | | 77 904 |
| 13 | | Հավաքարար | Տեխնիկական սպասարկման | _ | 1 | 77 904 | | | 77 904 |
| 14 | | Հավաքարար | Տեխնիկական սպասարկման | _ | 1 | 72 752 | | | 72 752 |
| 15 | | Վարորդ | Տեխնիկական սպասարկման | | 1 | 72 752 | | | 72 752 |
| 16 | | աղբահանության բանվոր | Տեխնիկական սպասարկման | _ | 1 | 77 904 | | | 77 904 |
| 17 | | Գերեզմանատան բանվոր | Տեխնիկական սպասարկման | _ | 1 | 72 752 | | | 72 752 |
| | Ընդամենը | | | | 17 | 1748776 | | 2090 | 1 750 866 |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Հավելված N 2
Լեռնանիստ գյուղական համայնքի ավագանու
2015 թվականի դեկտեմբերի 8-ի N 61-Ա որոշման

# ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿ

Կոտայքի մարզի Լեռնանիստի մանկապարտեզի /ՀՈԱԿ/ աշխատակիցների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը 2016 թվականի համար

Աշխատակիցների թվաքանակը՝ 20

| Հ/հ | Կազմակերպության անվանումը | Հաստիքի անվանումը | Հաստիքի տեսակը | Պաշտոնի ծածկագիրը | հաստիքային միավորը | դրույքը | Պաշտոնային դրույքաչափը | Հավելումը | Հավելավճարը | Աշխատավարձի չափը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | | 7 | 8 | 9 | 10 |
| 1 | Լեռնանիստի մանկապարտեզ /ՀՈԱԿ/ | տնօրեն | – | - | 1 | 1 | 88 400 | | | 88 400 |
| 2 | | Գլխ. Հաշվապահ | — | - | 1 | 0.5 | 77 904 | | | 38 952 |
| 3 | | Հաշվետար գանձապահ | – | - | 1 | 0.5 | 77 904 | | | 38 952 |
| 4 | | դաստիարակ | – | - | 6 | 0.5 | 79 400 | | | 238 200 |
| 5 | | դաստիարակի օգնական | – | - | 2 | 1 | 72 752 | | | 145 504 |
| 6 | | դաստիարակի օգնական | – | - | 1 | 1 | 77 904 | | | 77 904 |
| 7 | | դաստիարակ երաժիշտ | – | - | 1 | 0.75 | 79 467 | | | 59 600 |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 8 | | բուժքույր | – | - | 1 | 1 | 77 904 | | | 77 904 |
| 9 | | խոհարար | – | - | 1 | 1 | 77 904 | | | 77 904 |
| 10 | | խոհարարի օգնական | – | - | 1 | 0.5 | 72 752 | | | 36 376 |
| 11 | | Տնտեսվար | – | - | 1 | 0.5 | 77 904 | | | 38 952 |
| 12 | | դռնապան | – | - | 1 | 1 | 72 752 | | | 72 752 |
| 13 | | օժանդակ բանվոր | — | — | 1 | 0.5 | 72 752 | | | 36 376 |
| 14 | | պահակ | – | - | 1 | 1 | 72 752 | | | 72 752 |
| | | Ընդամենը | | | 20 | 14.25 | 1 078 451 | | | 1 100 528 |

ԼԵՌՆԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Հավելված N 3
Լեռնանիստ գյուղական համայնքի ավագանու
2015 թվականի դեկտեմբերի 8-ի N 61-Ա որոշման

# ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿ

Կոտայքի մարզի <<Լեռնանիստի բժշկական ամբուլատորիա>> ՀՈԱԿ-Ի աշխատակիցների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը 2016 թվականի համար

Աշխատակիցների թվաքանակը՝ 6

| Հ/հ | Կազմակերպության անվանումը | Հաստիքի անվանումըը | Հաստիքի տեսակը | Պաշտոնի ծածկագիրը | հաստիքային միավորը | դրույքը | Պաշտոնային դրույքաչափը | Հավելումը | Հավելավճարը | Աշխատավարձի չափը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | | 7 | 8 | 9 | 10 |
| 1 | <<Լեռնանիստի բժշկական ամբուլատորիա>> /ՀՈԱԿ/ | Տնօրեն | – | - | 1 | 0.5 | 59 550 | | | 59 550 |
| 2 | | Հաշվապահ | | - | 1 | 1.0 | 95 280 | | | 95 280 |
| 3 | | Ընտանեկան բժիշկ | – | – | 1 | 1.0 | 287 713 | | | 287 713 |
| 4 | | Ընտանեկան բուժքույր | | | 1 | 1.0 | 103 880 | | | 103 880 |
| 5 | | Ընտանեկան բուժքույր | – | – | 1 | 1.0 | 103 880 | | | 103 880 |
| 6 | | Սանիտար | – | – | 1 | 0.75 | 54 564 | | | 54 564 |
| 7 | | Օպերատոր | – | – | 1 | 0.75 | 58 428 | | | 58 428 |
| | | Ընդամենը | | | 7 | 6 | 763 295 | | | 763 295 |

ԼԵՌՆԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա.ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆԻՍՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Լեռնանիստ, /094-55-33-04, 094-04-76-40, lernanist1@rambler.ru,

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

08 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2015թվականի N 62-Ն

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով*

***Համայնքի ավագանին <u>Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝</u>***

1. Հաստատել Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնքի 2016 թվականի բյուջեն, համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող 10-րդ օրվանից:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ՀԱՅԿԱԶ
2. ԱՎԱԳՅԱՆ ԳԵՆԱԴԻ
3. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՍԱՄՎԵԼ
4. ԲԱՐԵՂԱՄՅԱՆ ԳՐԻԳՈՐԻ
5. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱԼԲԵՐՏ
6. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՎԱՉԱԳԱՆ
7. ՄԵԼՔՈՆՅԱՆ ԻՍԱՀԱԿ
8. ՄՈՎՍԻՍՅԱՆ ՍԱՄՎԵԼ
9. ՆԱԶԱՐՅԱՆ ՄԵԽԱԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՏՅՈՄ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆԻՍՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Լեռնանիստ, /094-55-33-04, 094-04-76-40, lernanist1@rambler.ru,

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2015թվականի N 63-Ն

### ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆԻՍՏԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆԸ ՉՀԱԿԱՍՈՂ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 54-րդ հոդվածի 2-րդ մասի, <<Բյուջետային համակարգի մասին >>Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ կետի

Համայնքի ավագանին ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Թույլատրել Լեռնանիստի գյուղապետին 2016 թվականի բյուջեի կատարման ընթացքում կատարել ավագանու որոշմանը չհակասող վերաբաշխումներ բյուջեի 15 %-ի չափով:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող 10-րդ օրվանից:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ՀԱՅԿԱԶ
2. ԱՎԱԳՅԱՆ ԳԵՆԱԴԻ
3. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՍԱՄՎԵԼ
4. ԲԱՐԵՂԱՄՅԱՆ ԳՐԻԳՈՐԻ
5. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱԼԲԵՐՏ
6. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՎԱՉԱԳԱՆ
7. ՄԵԼՔՈՆՅԱՆ ԽՍԱՀԱԿ
8. ՄՈՎՍԻՍՅԱՆ ՍԱՄՎԵԼ
9. ՆԱԶԱՐՅԱՆ ՄԵԽԱԿ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՏՅՈՄ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆԻՍՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Լեռնանիստ, /094-55-33-04, 094-04-76-40, lernanist1@rambler.ru,

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

08 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2015թվականի N 64-Ա

## ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԿԱՄԱՎՈՐ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և հիմք ընդունելով Լեռնանիստ համայնքի ղեկավարի 2015 թվականի դեկտեմբերի 4-ի առաջարկությունը

Համայնքի ավագանին **ՈՐՈՇՈՒՄ Է՝**

Սահմանել համայնքի ղեկավարի կամավոր լիազորությունների իրականացման կարգը 2016 թվականի համար՝

1. Սոցիալապես անապահով ընտանիքներին դրամական օգնության տրամադրում՝ 10 000 – 30 000 դրամի չափով:
2. Համայնքի այն ընտանիքներում, որտեղ կգրանցվի երեխայի ծնունդ, ելնելով համայնքի բյուջեի միջոցներից համայնքի բյուջեից հատկացնել 20 000 / քսան հազար/ ՀՀ դրամ դրամական օգնություն:
3. Համայնքի այն ընտանիքներում , որտեղ կգարնցվեն ընտանիքի անդամների մահվան դեպքեր, ելնելով համայնքի բյուջեի միջոցներից համայնքի բյուջեից հատկացնել 25 000/քսանհինգ հազար / ՀՀ դրամ դրամական օգնություն:
4. Սույն որոշման 1,2,3, կետերը ուժի մեջ են մտնում 2016 թվականի հունվարի 1-ից:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ՀԱՅԿԱԶ
2. ԱՎԱԳՅԱՆ ԳԵՆԱԴԻ
3. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՍԱՄՎԵԼ
4. ԲԱՐԵՂԱՄՅԱՆ ԳՐԻԳՈՐԻ
5. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱԼԲԵՐՏ
6. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՎԱԶԳԵՆ
7. ՄԵԼՔՈՆՅԱՆ ԻՍԱՀԱԿ
8. ՄՈՎՍԻՍՅԱՆ ՍԱՄՎԵԼ
9. ՆԱԶԱՐՅԱՆ ՄԽԻԹԱՐ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ԱՐՏՅՈՄ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ**

03002587